ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

2014 թվականի ներդրումային գործունեության

մոնիթորինգի արդյունքները

ԵՐԵՎԱՆ 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 4

ԲԱԺԻՆ 1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2014 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը 4

ԲԱԺԻՆ 2. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2014 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և ներդրումների ձևավորման աղբյուրները 8

2.1. Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները 8

2.2. Ներդրումների ձևավորման աղբյուրները 10

ԲԱԺԻՆ 3. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2014 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները 11

3.1.Գազափոխադրման համակարգ 11

3.1.1. Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցման և արդիականացման նպատակով կատարված ներդրումներ 11

3.1.2. Գազափոխադրման համակարգի վերակառուցում 11

3.1.3. Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով ներդրումներ 15

3.2. Գազաբաշխման համակարգ 18

3.2.1. Նոր բաժանորդների միացում 18

3.2.2. Գազաբաշխման համակարգի վերակառուցում 18

3.2.3. Գազաբաշխման համակարգի շահագործման և սպասարկման ծառայությունների ոլորտներում ներդրումներ 20

ԲԱԺԻՆ 4. Իրականացված ներդրումների ազդեցությունը սպասարկման որակի ցուցանիշների վրա գնումների 28

ԲԱԺԻՆ 5. Իրականացված գնումների մոնիթորինգի արդյունքները 29

ԲԱԺԻՆ 6. Հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը 29

6.1. Փաստացի կատարված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը 29

6.2. Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը 32

Եզրակացություններ 33

Հղումներ օգտագործված նյութերին 34

Նախաբան

Սույն վերլուծական տեղեկանքը մշակվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) 2015 թվականի աշխատանքային ծրագրի 27-րդ կետի **[Որոշում 1]** և արտացոլում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի (այսուհետև՝ ընկերություն) 2014-2016 թվականների ներդրումային ծրագրի 2014 թվականի հատվածի (այսուհետև՝ ներդրումային ծրագիր) մոնիթորինգի գնահատականը: Փաստաթուղթը ներառում է ներդրումային ծրագրի և փաստացի կատարված աշխատանքների համադրությունը, իրականացված ծախսերի արդյունավետության, ինչպես նաև՝ սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի վերլուծությունը:

Վերլուծական տեղեկանքը կազմվել է՝ հաշվի առնելով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2014-2016 թվականների ներդրումային ծրագիրը **[Որոշում 2, Եզրակացություն]** և լիցենզավորված գործունեության վերաբերյալ ընկերության կողմից հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը **[Հաշվետվություն, Տեղեկատվություն 1, Տեղեկատվություն 2]**:

ԲԱԺԻՆ 1.
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2014 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2014 թվականի տարեկան ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվում է տարբեր միջոցառումներ իրականացնել գազափոխադրման և գազաբաշխման համակարգերում՝ դրանց վերակառուցման, վերազինման, նոր բաժանորդների միացման և այլ հիմնախնդիրների լուծման նպատակով: Ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով նախատեսվում է նաև ներդրումներ իրականացնել տարբեր սարքավորումների, ժամանակակից տեխնիկա տեխնոլոգիաների, մեքենաների և մեխանիզմների ձեռքբերման ուղղությամբ:

Ներդրումային ծրագրով նախատեսված էր 2014 թվականի ընթացքում իրականացնել 9 396,6[1] մլն դրամի ներդրումներ, այդ թվում՝

- Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցման և ընդլայնման ուղղությամբ ներդրումներ՝ 1 023,5 մլն դրամ,
- գազափոխադրման համակարգի վերակառուցման ուղղությամբ ներդրումներ՝ 2 106,9 մլն դրամ,
- գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 471,1 մլն դրամ,
- նոր բաժանորդների միացման ուղղությամբ ներդրումներ՝ 332,5 մլն դրամ,
- գազաբաշխման համակարգի վերակառուցման ուղղությամբ ներդրումներ՝ 2 892,8 մլն դրամ,
- գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 2 569,7 մլն դրամ:

- այդ թվում՝ ազդանշանային սարքերի ինքնաշխատ վթարային կափույրների տեղակայման ուղղությամբ ներդրումներ՝ 565,0 մլն դրամ:

Ստորև՝ գրաֆիկ 1-ում, ներկայացված է ընկերության 2014 թվականի ներդրումային ծրագրի ծավալների բաշխումն ըստ նպատակային ուղղությունների:

Գրաֆիկ 1



[1] Սույն վերլուծական տեղեկանքում նշված բոլոր գումարները չեն ներառում ԱԱՀ-ն, բացառության մարդատար ավտոմեքենաների ձեռբերման գումարների:

Ինչպես երևում է գրաֆիկ 1-ից, Աբովյանի ԳՍՊԿ-ի ընդլայնման, վերականգնման, վերակառուցման և արդիականացման նպատակով նախատեսվում էր ներդնել նախատեսվող ներդրումների 11%-ը, որի 21%-ը նախատեսվում էր ուղղել 2 նոր՝ №23 և 25, գազահորերի կառուցման աշխատանքներն ավարտելուն և շահագործման հանձնելուն: Այս ուղղությամբ նախատեսվում էր նաև շահագործվող 6 գազահորերի ընդլայնում և վերականգնում, էլեկտրատնտեսության վերականգնում, վերազինում և այլ աշխատանքների իրականացում:

Գազափոխադրման համակարգի վերակառուցման ուղղությամբ նախատեսվող ներդրումների մեծ մասը, 61%-ը, նախատեսվում էր ուղղել վնասված մայրուղային գազատարերի վերականգնման, վերատեղադրման և փոխարինման աշխատանքներին: Նախատեսվում էր նաև կառուցել և արդիականացնել գազաբաշխիչ կայանները, չափիչ հանգույցները և այլ ինժեներական ենթակառուցվածքներ, վերականգնել գազաբաշխիչ կայանների և չափիչ հանգույցների էներգամատակարարման համակարգերը, կառուցել, վերականգնել և արդիականացնել էլեկտրաքիմիական պաշտպանության կայանները, ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ կապված Սևանա լճի մակարդակի բարձրացման ուղղությամբ և այլն:

Ներդրումային ծրագրի 5%-ը նախատեսվում էր ներդնել գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով՝ այդ թվում հաշվառման համակարգի արդիականացման նպատակով ձեռքբերել սարքավորումներ, գործիքներ, իսկ հաշվառման ցուցանիշների բարելավման նպատակով ներդնել ժամանակակից տեխնիկա և տեխնոլոգիաներ: Նշված ուղղությամբ համաձայնեցված ծավալի 63%-ը նախատեսվում էր մեքենա-մեխանիզմների ձեռքբերման նպատակով: Այս ուղղությամբ նախատեսվում էր նաև օպերատորների տների վերակառուցման և աշխատասենյակների կառուցման աշխատանքներ, հողամասերի ձեռքբերում, ինչպես նաև կապի համակարգի արդիականացման նպատակով չափիչ հանգույցներում օպտիկա-մանրաթելային գծերի անցկացում, և այլն:

Ներդրումների 4%-ը նախատեսված էր 9 000 նոր բաժանորդների մոտ գազի կենցաղային հաշվիչների և պաշտպանիչ արկղերի տեղադրման նպատակով:

Գազաբաշխման համակարգի վերակառուցման ուղղությամբ նախատեսված ներդրումների զգալի մասը, 86%-ը նախատեսված էր գազաբաշխման համակարգի

վնասված գազատարերի վերականգնման և վերատեղադրման համար: Նշված ուղղությամբ նախատեսվում էր նաև բնական գազի կենցաղային հաշվիչները և տեղադրման հանգույցները տեղափոխել՝ մոտեցման և սպասարկման համար անարգել և մատչելի տարածք, կառուցել էլեկտրաքիմիական պաշտպանության կայաններ, վերականգնել և արդիականացնել ընկերության էներգամատակարարման և ջերմամատակարարման համակարգերը, ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ կապված Սևանա լճի մակարդակի բարձրացման հետ և այլն:

Գազաբաշխման համակարգում նախատեսվող ներդրումների շրջանակում նախատեսվում էր 26 000 գազասպառողների մոտ ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային կափույրների ձեռքբերում և տեղադրում:

Գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով նախատեսվող ներդրումների 58% նախատեսված է գազաբաշխման համակարգի հաշվառման համակարգի արդիականացման և ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրման նպատակով: Այս ուղղությամբ նախատեսվում էր նաև ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով ձեռք բերել համակարգչային և կազմակերպչական տեխնիկա, գրասենյակային գույք, մեքենա մեխանիզմներ, վերականգնել ընկերության արտադրական և վարչական շենքերը, ընդլայնել և արդիականացնել ընկերության կապի համակարգը, քաղաքացիական պաշտպանության կազմակերպման համար ձեռք բերել անհրաժեշտ սարքավորումներ և այլն:

ԲԱԺԻՆ 2.

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2014 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և ներդրումների ձևավորման աղբյուրները

2.1. Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները

Համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի փաստացի իրականացված ներդրումների մասին հաշվետվության՝ ընկերությունը 2014 թվականի ընթացքում կատարել է 5 846,0 մլն դրամի կապիտալացվող աշխատանքներ, համաձայնեցվածի 62%-ը, որի արդյունքում շահագործման են հանձնվել 4 610,2 մլն դրամի հիմնական միջոցներ: Մնացած 1 235,8 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ կամ ավարտվել են, սակայն դեռևս չեն շահագործվում: Բացի վերը նշվածը իրականացվել են նաև 2 046,4 մլն դրամի ընթացիկ ծախսեր, որոնք հանդիսանում են սակագնի ծախսային տարրեր և ներդրումների մաս կազմել չեն կարող, ուստի ընկերության 2014 թվականի ներդրումային գործունեության արդյունքների վերլուծության ընթացքում այդ ծախսերը հաշվի չեն առնվել:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է ընկերության կողմից 2014 թվականի ընթացքում փաստացի իրականացված՝ ավարտված և հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

h/h	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը	Հանձնաժո-ղովի հետ համաձայնեց-ված ներդրումների կանխատես-վող ծավալը	Փաստացի իրականա-ցված՝ ավարտ-ված ներդրում-ներ	Ծրագրի կատար-ման ցուցանիշը	Իրականացված ներդրումներ՝ այդ թվում շահագործման չհանձնված		
					2014 թ.	2014թ. սկզբի դրու-թյամբ (մնացորդ)	Ընդա-մենը
		մլն դրամ	մլն դրամ	%	մլն դրամ	մլն դրամ	մլն դրամ
1	2	3	4	5	6	7	8
1	Գազափոխադրման համակարգի Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցմանն ու ընդլայնմանն ուղղված ներդրումներ	1 023.5	29.5	3%	358.2	248.2	606.4

Աղյուսակ 1
(շարունակություն)

.

հ/հ	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների կանխատեսվող ծավալը	Փաստացի իրականացված՝ ավարտված ներդրումներ	Ծրագրի կատարման ցուցանիշը	Իրականացված ներդրումներ՝ այդ թվում շահագործման չհանձնված		
					2014թ.	2014թ. սկզբի դրությամբ (մնացորդ)	Ընդամենը
		մլն դրամ	մլն դրամ	%	մլն դրամ	մլն դրամ	մլն դրամ
1	2	3	4	5	6	7	8
2	Գազափոխադրման համակարգի վերակառուցմանն ուղղված ներդրումներ	2 107.0	599.3	28%	742.1	12.2	754.3
3	Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ	471.1	35.5	8%	6.0	29.5	35.5
4	Նոր բաժանորդների միացմանն ուղղված ներդրումներ	332.5	566.9	170%	566.9	-	566.9
5	Գազաբաշխման համակարգի վերակառուցմանն ուղղված ներդրումներ	2 892.8	2 206.5	76%	2 580.2	71.6	2 651.9
6	Գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ	2 569.7	1 172.6	46%	1 153.8	77.2	1 231.0
	Ընդամենը	9 396.6	4 610.2	49%	5 407.2	438.8	5 846.0

Համաձայն Աղյուսակ 1-ի ընկերությունը ներդրումային ծրագիրը կատարել է 49%-ով: Ընդ որում ներդրումները հիմնականում ուղղվել են գազաբաշխման համակարգին: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ չնայած գազի ստորգետնյա պահեստարան կայանում (ԳՍՊԿ) իրականացված ներդրումներից շահագործման է հանձնվել նախատեսվածի ընդամենը 3%-ը, զգալի ներդրումներ են իրականացվել նաև նոր գազահորերի կառուցման ուղղությամբ, որոնք շահագործման կհանձնվեն գազահորերի կառուցման աշխատանքների ամբողջական ավարտից հետո:

2.2. Ներդրումների ձևավորման աղբյուրները

Ստորև՝ աղյուսակ 2-ում, ներկայացված են 2014 թվականի ընթացքում կատարված ներդրումների ձևավորման աղբյուրները:

Աղյուսակ 2

№	Ներդրումների ձևավորման աղբյուրները	Իրականացված		Շահագործման հանձնված	
		մլն դրամ	%	մլն դրամ	%
1	2	3	4	5	6
1	**Նախորդ ժամանակահատվածի անավարտ աշխատանքներ**	**438.8**	**8%**	**175.9**	**3%**
2	**Կապալառու կազմակերպությունների միջոցով կատարված աշխատանքներից**	**3 356.7**	**57%**	**2 549.9**	**44%**
3	**Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներից**	**285.8**	**5%**	**285.8**	**5%**
4	**Սեփական ուժերով կատարված աշխատանքներից**	**1 764.7**	**30%**	**1 598.7**	**27%**
4.1	*աշխատանքի վճարման գծով ծախսումներ*	266.3		232.4	
4.2	*նյութական ծախսումներ*	1 031.6		900.3	
4.3	*տեղակայման ենթակա սարքավորումներ*	464.2		464.2	
4.4	*նախագծային աշխատանքներ*	-		-	
4.5	*այլ*	2.6		1.7	
	ԸՆԴԱՄԵՆԸ	**5 846.0**		**4 610.2**	

Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 2-ից, ներդրումներն իրականացվել են ինչպես կողմնակի կազմակերպությունների միջոցով, այնպես էլ՝ սեփական ուժերով: Հարկ է նշել, որ զգալի մեծացել է կողմնակի կազմակերպությունների կողմից իրականացված աշխատանքների համամասնությունը: Եթե 2013 թվականի ընթացքում կողմնակի կազմակերպությունների ուժերով կատարվել էր ընդհանուր ներդրումների 11%-ը, ապա 2014 թվականի ընթացքում այն կազմել է ընդհանուրի 44%-ը:

ԲԱԺԻՆ 3.
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2014 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները

3.1. Գազափոխադրման համակարգ

Ստորև, ըստ ուղղությունների, ներկայացված է ընկերության կողմից 2014 թվականի ընթացքում գազափոխադրման համակարգում իրականացված ներդրումների ծավալները:

3.1.1. Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցման և արդիականացման նպատակով կատարված ներդրումներ

2014 թվականի ընթացքում Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցման և ընդլայնման ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 1 023,5 մլն դրամ՝ նոր գազահորերի կառուցման, շահագործվող հորերի ընդլայնման և վերականգնման, կոմպրեսորային արտադրամասի, էներգահամակարգի վերականգնման և վերազինման և այլ նպատակներով: Իրականացվել են 606,4 մլն դրամի աշխատանքներ, որից շահագործման են հանձնվել ***«Կոմպրեսորային արտադրամասի վերականգնման և վերազինման աշխատանքներ»*** ենթաուղղությամբ նախատեսված ջրի տաք ցիկլի խողովակների և կոլլեկտորների փոխարինման աշխատանքները՝ 29,5 մլն դրամ արժեքով: Այս աշխատանքը ներդրումային ծրագրում ներառված էր 30.7 մլն դրամ արժեքով:

Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցման և ընդլայնման ուղղության մնացած ենթաուղղություններով 2014 թվականին ներդրումներ չեն իրականացվել կամ իրականացված ներդրումները մնացել են անավարտ:

3.1.2. Գազափոխադրման համակարգի վերակառուցում

Գազափոխադրման համակարգի վերակառուցման ուղղությամբ 2014 թվականին համաձայնեցված էր 2 106,9 մլն դրամ մայրուղային գազատարերի կառուցման, գործող գազատարերի վերակագնման, վերատեղադրման և փոխարինման, գազաբաշխիչ

կայանների և չափիչ հանգույցների վերականգնման և արդիականացման, էլեկտրամատակարարման համակարգի, շանթարգելների և սարքավորումների հողանցման կոնտուրների վերականգնման, էլեկտրաքիմիական կայանների կառուցման, վերականգնման և արդիականացման նպատակով: Նախատեսվում էր նաև ներդրումներ իրականացնել Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով գազատարերի վերատեղադրման և գազաբաշխիչ կայանի կառուցման և այլնի ուղղությամբ:

2014 թվականի ընթացքում ընկերությունն այս ուղղությամբ իրականացրել է 754,3 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում 599,3 մլն դրամի աշխատանքներ շահագործման են հանձնվել:

Այս ենթաուղղության **«Մայրուղային գազատարերի վերականգնում, վերատեղադրում և փոխարինում»** ենթաուղղությամբ 2014 թվականին համաձայնեցված էր 1 285,7 մլն դրամ: Փաստացի իրականացվել են 558,0 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում 476,6 մլն դրամի աշխատանքներ հանձնվել են շահագործման:

«Կարմիր Կամուրջ-Սևքար-Բերդ Dy1000մմ մայրուղային գազատարի վերականգնում» ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 17,0 մլն դրամ: Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 12,8 մլն դրամի վերականգնման աշխատանքներ, որոնք ամբողջ ծավալով հանձնվել են շահագործման:

«Ղազախ-Բերդ-Սևան Dy1000մմ մայրուղային գազատարի վերականգնում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 9,0 մլն դրամի աշխատանքներ իրականացնել: Փաստացի իրականեցվել են 6,8 մլն դրամի վերեկանգնման աշխատանքներ, որոնք ամբողջ ծավալով հանձնվել են շահագործման:

«Ղազախ-Երևան-Ջրաբեր-ԳԲԿ-2 I գիծ Dy700մմ մայրուղային գազատարի վերականգնում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 12,8 մլն դրամի աշխատանքներ իրականացնել: Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 1,8 մլն դրամի աշխատանքներ:

«Ղազախ-Երևան-ԳՍՊԿ Dy500մմ մայրուղային գազատարի վերականգնում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 117,4 մլն դրամի աշխատանքներ իրականացնել:

Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 71,6 մլն դրամի աշխատանքներ:

«Երևան ԳԲԿ-1-ԳՍՊԿ Dպ500մմ մայրուղային գազատարի վերականգնում» ենթաուղղությամբ նախատեսվում էր իրականացնել 44,0 մլն դրամի աշխատանքներ: Փաստացի իրականացվել են 27,0 մլն դրամի աշխատանքներ, որոնք հանձնվել են շահագործման:

«Իլյիչևսկ-Երևան D-720մմ և Երևան-Արարատ D-377մմ մայրուղային գազատարների D-530մմ միջակապի վերականգնում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 281,1 մլն դրամի աշխատանքներ իրականացնել: Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 319,3 մլն դրամի աշխատանքներ:

«Մարալիկ-Կարմրաշեն Dպ500մմ մայրուղային գազատարի գազուղիների վերականգնում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 15,0 մլն դրամի աշխատանքներ իրականացնել: Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 9,1 մլն դրամի աշխատանքներ, որոնք ևս հանձնվել են շահագործման:

«Արմավիր-Կարմրաշեն Dպ500մմ մայրուղային գազատարի գազուղիների վերականգնում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 15,0 մլն դրամի աշխատանքներ իրականացնել: Փաստացի իրականացվել են 10,8 մլն դրամի աշխատանքներ, որոնք հանձնվել են շահագործման:

«Գորիս-Կապան-Քաջարան Dպ500մմ մայրուղային գազատարի վերականգնում և գծային փականի փոխարինում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 21,0 մլն դրամի աշխատանքներ իրականացնել: Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 17,4 մլն դրամի աշխատանքներ:

«Գազաբաշխիչ կայանների, չափիչ հանգույցների և այլ ինժեներական ենթակառուցվածքների շինարարություն» ենթաուղղությամբ 2014 թվականին նախատեսվում էր 73,6 մլն դրամի աշխատանքներ իրականացնել Իլյիչևսկ-Երևան D-720մմ և Երևան-Արարատ D-377մմ մայրուղային գազատարների D-530մմ միջակապի վրա ճնշման նվազեցման հանգույցի կառուցման ուղղությամբ:

Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 48,9 մլն դրամի ներդրումներ:

«Գազաբաշխիչ կայանների, չափիչ հանգույցների և այլ ինժեներական ենթակառուցվածքների վերակառուցում և արդիականացում» ենթաուղղությամբ 2014 թվականին նախատեսվում էր ներդնել 256,5 մլն դրամ:

Փաստացի իրականացվել են 46,1 մլն դրամի աշխատանքներ, որից 42,5 մլն դրամ շահագործման են հանձնվել:

«ԳԲԿ-ներում տեխնոլոգիական սարքավորումների և չափիչ գծերի փոխարինում (ֆիլտրեր, ճնշման կարգավորիչներ, փականներ, ապահովիչ արտանետիչ կափույրներ, հանգույցներ և այլն)» ենթաուղղությամբ նախատեսվում էր 136,5 մլն դրամ՝ 17 գազաբաշխիչ կայաններում տեխնոլոգիական սարքավորումների տեղակայման և չափիչ գծերի փոխարինման նպատակով:

Փաստացի իրականացվել են 41,8 մլն դրամի աշխատանքներ, որից 40,0 մլն դրամը հանձնվել է շահագործման:

«Կեչուտ» և «Շաղափ» չափիչ հանգույցի վերակառուցում (դիաֆրագմային խցի փոխարինում)» ենթաուղղություններով նախատեսվում էր 1,5-ական մլն դրամ արժեքով 2 խցիկի փոխարինում: Փաստացի իրականացվել են ընդամենը 2,5 մլն դրամի ներդրումներ, որոնք ամբողջ ծավալով հանձնվել են շահագործման:

«ԳԲԿ-ների և ՉՀ-ների էլեկտրամատակարարման համակարգի, շանթարգելների և սարքավորումների հողանցման կոնտուրների վերականգնում» ենթաուղղությամբ 2014 թվականին նախատեսվում էր 45 գազաբաշխիչ կայաններում և չափիչ հանգույցներում 19,7 մլն դրամի ներդրումներ իրականացնել:

Փաստացի իրականացվել են 17,8 մլն դրամի ներդրումներ, որից 17,7 մլն դրամը շահագործման է հանձնվել:

«ԷՔՊ կայանների կառուցում, վերականգնում և արդիականացում» ենթաուղղությամբ 2014 թվականին նախատեսվում էր ներդնել 121,0 մլն դրամ, որից 107,5 մլն դրամը 14 կաթոդային կայանների կառուցման, իսկ 13,5 մլն դրամը՝ 100 հսկիչ-չափիչ կետերի տեղադրման նպատակով:

2014 թվականին այս ենթաուղղության ***«ԷՔՊ կաթոդային կայանների կառուցում»*** ենթաուղղությամբ շահագործման են հանձնվել 4 էլեկտրաքիմիական պաշտպանության կայանների տեղակայման նախագծեր ընդհանուր 0,1 մլն դրամ արժեքով:

Գազափոխադրման համակարգի վերակառուցման ուղղության մնացած ենթաուղղություններով 2014 թվականին ներդրումներ չեն իրականացվել կամ իրականացված ներդրումները մնացել են անավարտ:

Տվյալ ուղղությամբ ավարտված ներդրումների ծավալում ներկայացված են նաև ծրագրից դուրս իրականացված 13,5 մլն դրամ ներդրումներ:

3.1.3. Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով ներդրումներ

Գազափոխադրման համակարգում 2014 թվականին նախատեսվում էր 471,1 մլն դրամով ձեռք բերել և տեղադրել միկրոպրոցեսորային ծախսաչափային համակարգեր՝ իրենց լրակազմող արտադրական մասերով, չափագիտական թվային գործիքներ, ջերմաստիճանի և ճնշման տվիչների կարգաբերիչներ՝ իրենց օժանդակ սարքավորումներով, տարբեր մեքենա-մեխանիզմներ, ԳԲԿ-ներում և ՉՀ-ներում օպերատորների համար կառուցել աշխատասենյակներ, վերակառուցել տներ, չափիչ հանգույցներով, օպերատորի տնով, փականային հարթակներով ծանրաբեռնված հողամասեր ձեռքբերել ինչպես նաև՝ միջոցառումներ իրականացնել գազա-փոխադրման համակարգի կապի բարելավման ուղղությամբ որոշ չափիչ հանգույցներում օպտիկա-մանրաթելային գծեր անցկացնելու, կարգավարական կենտրոն արդիականացնելու և այլնի նպատակով:

Փաստացի իրականացվել և ամբողջ ծավալով շահագործման են հանձնվել 35,5 մլն դրամի ներդրումներ:

«Հաշվառման համակարգի արդիականացում» ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 31,3 մլն դրամ՝ միկրոպրոցեսորային ծախսաչափային համակարգերի (իրենց լրակազմող արտադրամասերով), չափագիտական սարքերի և արագահան տափօղակային հանգույցների ձեռք բերման և տեղադրման նպատակով:

Փաստացի ներդրվել է 8,5 մլն դրամ, որի արդյունքում նույն ծավալով հիմնական միջոցներ հանձնվել են շահագործման:

Նշված ուղղության ***«Միկրոպրոցեսորային ծախսաչափային համակարգերի ձեռքբերում և տեղադրում»*** ենթաուղղությամբ 2014 թվականին նախատեսվում էր ներդնել 11,7 մլն դրամ 7 հատ միկրոպրոցեսորային ծախսաչափային համակարգերի ձեռքբերման և տեղադրման ուղղությամբ:

Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 8,5 մլն դրամի հիմնական միջոցներ, որի արդյունքում ձեռք են բերվել 4 ծախսաչափեր: Բացի վերը նշվածը 1,5 մլն դրամ արժեքով ձեռք է բերվել ճնշման ջերմաստիճանային կարգավորիչ որը համաձայնեցված չէ ներդրումային ծրագրով:

«Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդնում» ենթաուղղությամբ 2014 թվականին համաձայնեցված էր 65,0 մլն դրամ՝ ճնշման և ջերմաստիճանի տվիչների համար էտալոնային կարգաբերիչների, օժանդակ սարքավորումների և համալրող սարքերի, հոսքային քրոմատոգրաֆի, գազանալիզատորների և օդում մեթանի պարունակության չափիչ սարքերի ձեռքբերման և տեղակայման նպատակով:

Փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 3,1 մլն դրամի հիմնական միջոցներ:

«Հոսքային քրոմատոգրաֆի ձեռքբերում և տեղադրում» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 31 մլն դրամ 1 հոսքային քրոմատոգրաֆի ձեռբերման և տեղակայման համար: Փաստացի ձեռք են բերվել հոսքային քրոմատոգրաֆի տարբեր մասեր և «Քրոմատեք» անալիտիկ ծրագրով սկավառակներ 3,1 մլն դրամ արժեքով, որոնք համաձայնեցված չեն ներդրումային ծրագրով:

«Ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերում» ուղղությամբ 2014 թվականին նախատեսվում էր ձեռք բերել 299,2 մլն դրամ ընդհանուր արժեքով 14 միավոր տարբեր մեքենա-մեխանիզմներ:

«Խողովակաամբարձիչ ТР 12.19.01 տիպի» ձեռքբերման ուղղությամբ նախատեսված էր 80 մլն դրամ: Փաստացի ձեռք է բերվել 5,8 մլն դրամ արժեքով 1992թ. արտադրության ՏԳ-126 484 խողովակատեղադրիչ:

«Մարդատար մեքենայի» ձեռքբերման ուղղությամբ համաձայնեցված էր 5,5 մլն դրամ՝ 1 մարդատար մեքենա ձեռքբերելու համար, փաստացի ձեռք են բերվել ՎԱԶ 21213՝ 0,4 մլն դրամ, և ԳԱԶ -311000՝ 2,7 մլն դրամ արժեքով: Նշված մեքենաների ձեռքբերման փաստաթղթերի ուսումնասիրությունը և, հաշվի առնելով, որ նշված մեքենաները ձեռք են բերվել 2012 թվականին «ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ» «ՏՐԱՆՍԳԱԶՇԻՆ» ՍՊԸ-ից, որն Ընկերության դուստր ձեռնարկությունն է և հավատարմագրային կառավարման են հանձնվել «Կորպորատիվ տեխնոլոգիական կապի միջոցների և համակարգերի շահագործում և սպասարկում» ՍՊԸ-ին, որը զբաղվում նաև Ընկերության լիցենզավորված գործունեությանը չմասնակցող

գործունեությամբ, ուստի մեքենաների ձեռբերմանն ուղղված 3,1 մլն դրամը ենթակա է նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Ինչ վերաբերվում է 1992 թվականի խողովակաամբարձիչի ձեքբերմանը, ապա նշված ուղղությամբ իրականացված 5,8 մլն դրամի ներդրումները ենթակա են նվազեցման՝ ոչ բավարարար հիմնավորված լինելու պատճառով:

«Հողատարածքների, շենքերի, շինությունների և այլ անշարժ գույքի ձեռքբերում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 2,0 մլն դրամ արժեքով Սևան-1, Սևան-2, Սևան-3 չափիչ հանգույցներով, օպերատորի տնով, փականային հարթակներով ծանրաբեռնված 1,2 հա մակերեսով հողամասեր ձեռքբերել:

Փաստացի ձեռք են բերվել ներդրումային ծրագրով չհամաձայնեցված 0,6 մլն դրամ արժեքով 0,3 հա մակերեսով երկու հողամասեր Սյունիքի մարզում:

«Կապի համակարգի արդիականացում» ենթաուղղությամբ 2014 թվականին համաձայնեցված էր 45,7 մլն դրամ 4 չափիչ կետերում մոտ 11 կմ երկարությամբ օպտիկա-մանրաթելային գծերի անցկացման և «Տրանսգազ» ՍՊԸ-ի կարգավարական կենտրոնի արդիականացման նպատակով:

Փաստացի ձեռք են բերվել AdAstra TM և RTM ծրագրային ապահովումներ՝ 0,7 մլն դրամ արժեքով:

«Գազափոխադրման համակարգի այլ ուղղություններով ներդրումներ» ուղղության մնացած ենթաուղղություններով 2014 թվականին ներդրումներ չեն իրականացվել կամ իրականացված ներդրումները մնացել են անավարտ:

Տվյալ ուղղությամբ ավարտված ներդրումների ծավալում ներկայացված են նաև ծրագրից դուրս իրականացված ներդրումներ՝ 13,5 մլն դրամ ծավալով, որոնք նույնպես նվազեցվել են ավարտված ներդրումների ծավալներից: Արդյունքում, այս ուղղությամբ իրականացված 35,5 մլն դրամի ներդրումներից 28,2 մլն դրամի ներդրումները ենթակա են նվազեցման և սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումները կազմում են 7,3 մլն դրամ:

3.2. Գազաբաշխման համակարգ

Ստորև, ըստ ուղղությունների, ներկայացված է ընկերության կողմից 2014 թվականի ընթացքում գազաբաշխման համակարգում իրականացված ներդրումների ծավալները:

3.2.1. Նոր բաժանորդների միացում

Այս նպատակով 2014 թվականին նախատեսվում էր 332,5 մլն դրամ ծավալով 9 000 կոմպլեկտ բնական գազի կենցաղային հաշվիչներ և պաշտպանիչ արկղեր ձեռքբերել և տեղադրել:

Փաստացի ձեռք են բերվել և տեղակայվել 16 871 գազահաշվիչներ՝ 566,9 մլն դրամ ընդհանուր արժեքով: Նոր բաժանորդների միացման արդյունքում 2015 թվականի տարեսկզբի դրությամբ բնական գազի բաժանորդների ընդհանուր թիվը կազմել է 661 386 **[Տեղեկատվություն 2]**:

3.2.2. Գազաբաշխման համակարգի վերակառուցում

Գազաբաշխման համակարգի վերակառուցման նպատակով նախատեսվում էր ներդնել 2 892,8 մլն դրամ՝ գազատարերի վերականգնման և վերատեղադրման, բնական գազի կենցաղային հաշվիչների և տեղադրման հանգույցների տեղափոխման, էլեկտրաքիմիական պաշտպանիչ կայանների կառուցման, էներգամատակարարման և ջերմամատակարարման համակարգերի վերականգնման և արդիականացման և այլ աշխատանքների ուղղությամբ: Նախատեսվում էր նաև ներդրումներ կատարել Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով գազատարերի վերատեղադրման և կառուցման ուղղությամբ:

Փաստացի ներդրվել է 2 646,7 մլն դրամ, որից 2 201,4 մլն դրամի աշխատանքներ ավարտվել են:

«Գազաբաշխման համակարգում գազատարերի վերականգնում, վերատեղադրում» ուղղությամբ 2014 թվականին նախատեսվում էր ներդնել 2 476,9 մլն դրամ:

Փաստացի ներդրվել է 2609,1 մլն դրամ, որից 2 163,8 մլն դրամի աշխատանքներ ավարտվել են:

Ավարտված աշխատանքների ծավալում ներկայացված են 67,5 մլն դրամ ընդհանուր ծավալով գազաչափիչ կայանների նորոգման, ճնշման կարագավորիչների տեղակայման և շենքերի գազամատակարարման աշխատանքներ՝ որոնք ներդրումային ծրագրով համաձայնեցված չեն:

«ԷՔՊ կայանների կառուցում» ենթաուղղությամբ 2014 թվականին նախատեսվում էր 187,1 մլն դրամ ներդնել 36 կայանների կառուցման և 25 չափիչ կետեր ձեռք բերելու և տեղադրելու ուղղությամբ:

Փաստացի իրականացվել են 8,4 մլն դրամի ներդրումներ, որոնք ամբողջ ծավալով հանձնվել են շահագործման: Այս ծավալում 5.2 մլն դրամը ուղղվել է թվով 3 նոր կայանների կառուցմանը: Մնացած 3,2 մլն դրամը էլեկտրաքիմիական պաշտպանության կայաններում տեղակայված սարքավորումների արժեքն է, որը համաձայնեցված չէ ներդրումային ծրագրով:

«Էներգամատակարարման և ջերմամատակարարման համակարգերի վերականգնում և արդիականացում» ենթաուղղությամբ 34,7 մլն դրամ էր նախատեսված վարչական շենքի էներգամատակարարման համակարգի, ինչպես նաև ջերմամատակարարման համակարգերի վերականգնման և արդիականացման նպատակով:

Փաստացի իրականացվել են 29,2 մլն դրամի աշխատանքներ, որոնք ամբողջությամբ հանձնվել են շահագործման:

Այս ենթաուղղության ***«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի վարչական շենքի էներգամատակարարման համակարգի վերականգնում և արդիականացում»*** ենթաուղղությամբ 22,5 մլն դրամ էր նախատեսվում ուղղել 35/6 կՎ և 6/0,4 կՎ լարման ենթակայաններում սարքավորումների փոխարինման աշխատանքների իրականացմանը:

Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 24,7 մլն դրամի աշխատանքներ:

«Ջերմամատակարարման համակարգերի վերականգնում և արդիականացում» ենթաուղղությամբ 12,2 մլն դրամ նախատեսված էր ԳԳՄ-ների վարչական շենքերի, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի վարչական շենքի ջեռուցման և ջերմամատակարարման համակարգերի արդիականացման ուղղությամբ:

Փաստացի իրականացվել են 4,5 մլն դրամի աշխատանքներ, որոնք ամբողջ ծավալով հանձնվել են շահագործման:

ԳԳՄ-ների վարչական շենքերի ջեռուցման և ջերմամատակարարման համակարգերի արդիականացում ենթաուղղությամբ համաձայնեցված էր 8,0 մլն դրամ

Փաստացի իրականացված աշխատանքների ամբողջ ծավալը՝ 1,3 մլն դրամ, գազակարգավորիչ կայանների տաքացման վառարանների, դրանց հորածորանային և պահպանման կափույրների տեղակայման աշխատանքներ են: Նշված աշխատանքները համաձայնեցված չեն ներդրումային ծրագրով:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի վարչական շենքի կաթսայատան արտաքին ջերմատար խողովակների (D=108մմ) փոխարինում ենթաուղղությամբ համաձայնեցված էր 3 մլն դրամ 300մ-ի համար:

Փաստացի իրականացվել են 2,2 մլն դրամի ներդրումներ 76 մ խողովակի փոխարինման ուղղությամբ, որոնք ամբողջությամբ ավարտվել են:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի վարչական շենքի կաթսայատան կաթսաների վերանորոգում ենթաուղղությամբ համաձայնեցված էր 1,2 մլն դրամ՝ ընկերության վարչական շենքի կաթսայատան 3 կաթսաների վերանորոգման ուղղությամբ:

Փաստացի շահագործման են հանձնվել 1,05 մլն դրամի ակտիվներ:

Գազաբաշխման համակարգի վերակառուցման ուղղության մնացած ենթաուղղություններով 2014 թվականին ներդրումներ չեն իրականացվել կամ իրականացված ներդրումները մնացել են անավարտ:

3.2.3. Գազաբաշխման համակարգի շահագործման և սպասարկման ծառայությունների ոլորտներում ներդրումներ

Այս նպատակով 2014 թվականին հաշվառման համակարգի արդիականացման, գազաբաշխման համակարգի ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների, համակարգչային, կազմակերպչական տեխնիկայի և գույքի ձեռքբերման, ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերման և վերասարքավորման, շենքերի և շինությունների վերականգնման և վերակառուցման, կորպորատիվ տեխնոլոգիական կապի համակարգի ընդլայնման և արդիականացման,

և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման նպատակով նախատեսվում էր իրականացնել 2 569,7 մլն դրամի ներդրումներ:

Փաստացի իրականացվել են 1 236,2 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում 1 117,7 մլն դրամի հիմնական միջոցներ հանձնվել են շահագործման:

Հաշվետու տարում **«Հաշվառման համակարգի արդիականացում»** ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 608,5 մլն դրամ՝ գազի ծավալի էլեկտրոնային ճշտիչների, մեմբրանային գազահաշվիչների արկղերի, էլեկտրոնային ճշտիչներով համալրված անդրադարձային գազահաշվիչների ծախսաչափային հանգույցների (ներառյալ համապատասխան սարքավորումներով համալրված արկղերը) և այլ սարքերի ձեռքբերման նպատակով:

Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 316,6 մլն դրամի ներդրումներ:

Այս ենթաուղղության ***«Մեմբրանային գազահաշվիչների համար էլեկտրոնային ճշտիչների ձեռքբերում և տեղադրում»*** ենթաուղղությամբ նախատեսվում էր 39,8 մլն դրամ ուղղել 150 էլեկտրոնային ճշտիչներ ձեռքբերելուն և տեղակայելուն:

Փաստացի իրականացվել են 67,7 մլն դրամի ներդրումներ: Իրականացված ներդրումների ծավալներում ներկայացված են 2,9 մլն դրամ ընդհանուր արժեքով գազահաշվիչների փոխարինման և չափիչ հանգույցների տեղակայման աշխատանքներ, որոնք նշված ենթաուղղությամբ համաձայնեցված չեն:

«Էլեկտրոնային ճշտիչներով համալրված անդրադարձային գազահաշվիչների ծախսաչափային հանգույցների (ներառյալ համապատասխան սարքավորումներով համալրված արկղերը) ձեռքբերում և տեղադրում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 467,1 մլն դրամ ներդնել 300 ծախսաչափային հանգույցների ձեռքբերման և տեղակայման նպատակով:

Փաստացի ներդրվել է 248,9 մլն դրամ, որի արդյունքում տեղակայվել են 199 գազահաշվիչներ, իրենց ծախսաչափային հանգույցներով:

«Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրում» ենթաուղղությամբ 2014 թվականին համաձայնեցված էր 883,4 մլն դրամ՝ նոր սերնդի ծախսաչափերի, ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային կափույրների,

գազի ճնշման անհատական կարգավորիչների ձեռքբերման և փոխարինման, տարբեր սարքերի և գործիքների ձեռքբերման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են 439,9 մլն դրամի ներդրումներ, որից 439,4 մլն դրամը հանձնվել են շահագործման:

«Ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային կափույրների ձեռքբերում և տեղադրում» ենթաուղղությամբ 2014 թվականին նախատեսվում էր 565,0 մլն դրամ ներդնել 26 հազար ազդանշանային սարքեր և անջատիչ վթարային կափույրներ տեղակայելու ուղղությամբ:

Հաշվետու տարում նշված ենթաուղղությամբ 324,7 մլն դրամ ընդհանուր արժեքով տեղակայվել են 14 478 հատ սարքեր:

Նշված ենթաուղղությամբ 0,9 մլն դրամ ծավալով ներկայացվել է նաև ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային անջատիչ կափույրների տեղադրման ժամանակ օգտագործված գործիքների մաշվածության և 0,1 մլն դրամի՝ այդ գործիքների վերանորոգման և այլ ծախսերը չեն հանդիսանում ներդրումային ծրագրով փոխհատուցման ենթակա ծախսեր, քանի որ նշված գործիքներն իրենց ձեռքբերման ժամանակ ամբողջ արժեքով արդեն իսկ ներառվել են սակագնի մեջ, իսկ դրանց վերանորոգման հետ կապված ծախսերը բնույթով ընթացիկ են:

«GSA-160 գազի ճնշման անհատական կարգավորիչների ձեռքբերում և տեղադրում» ենթաուղղությամբ 2014 թվականին համաձայնեցված էր 15,0 մլն 62 սարքավորումներ ձեռքբերելու և տեղակայելու նպատակով:

Հաշվետու տարում տեղակայվել են 26 ճնշման անհատական կարգավորիչներ 5,6 մլն դրամ ընդհանուր արժեքով:

«GSA-100 գազի ճնշման անհատական կարգավորիչների ձեռքբերում և տեղադրում» ենթաուղղությամբ 2014 թվականին համաձայնեցված էր 102,3 մլն 465 սարքավորումներ ձեռքբերելու և տեղակայելու նպատակով:

Հաշվետու տարում տեղակայվել են 111 ճնշման անհատական կարգավորիչներ 26,9 մլն դրամ ընդհանուր արժեքով:

«GSA-70 գազի ճնշման անհատական կարգավորիչների ձեռքբերում և տեղադրում» ենթաուղղությամբ 2014 թվականին համաձայնեցված էր 65,3 մլն դրամ 330 սարքավորումներ ձեռքբերելու և տեղակայելու նպատակով:

Հաշվետու տարում տեղակայվել են 18 ճնշման անհատական կարգավորիչներ 3,1 մլն դրամ ընդհանուր արժեքով:

«Չափիչ և հատուկ նշանակության սարքերի և գործիքների ձեռքբերում» ուղղությամբ 2014 թվականին նախատեսվում էր ներդնել 109,0 մլն դրամ: Հաշվետու տարում ներդրվել է 79,1 մլն դրամ:

«Խողովակաշարերի տեղորոշիչ սարքերի ձեռքբերում» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 37,5 մլն դրամ՝ 15 սարքեր ձեռքբերելու նպատակով:

Փաստացի ձեռք են բերվել 14 Ստալկեռ 75-04 խողովակաշարերի տեղորոշիչ սարքեր 15,2 մլն դրամ ընդհանուր արժեքով և նշված սարքերի համար 3,0 մլն դրամ ընդհանուր արժեքով 36 տվիչներ:

«Հոսքափնտրիչ սարքերի ձեռքբերում» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 35,7 մլն դրամ՝ 15 սարքեր ձեռքբերելու նպատակով:

Փաստացի ձեռք են բերվել 39,2 մլն դրամ ընդհանուր արժեքով 15 գազանալիզատորներ և 0,9 մլն դրամ ընդհանուր արժեքով գազի ինտենսիվության ինդիկատորներ և արտանետվող գազի տվիչ:

«Արտահոսքի ցուցասարքերի ձեռքբերում» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 22,5 մլն դրամ՝ 313 սարքեր ձեռքբերելու նպատակով:

Փաստացի ձեռք են բերվել 18,0 մլն դրամ ընդհանուր արժեքով 316 գազափնտրիչներ և 0,6 մլն դրամ ընդհանուր արժեքով օդամուղի ստուգիչ սարքեր: Վերջիններիս ձեռքբերումը՝ 0,6 մլն դրամ, համաձայնեցված չէ նշված ենթաուղղությամբ:

«GPS նավիգացիոն սարքի ձեռքբերում նախագծա-հետազոտական աշխատանքների համար» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 0,3 մլն դրամ:

Փաստացի ձեռք է բերվել և շահագործման հանձնվել մեկ սարք՝ 0,2 մլն դրամ արժեքով:

«Դիմադրության չափիչ սարք (ներդրված հիշողությունը 1000 չափման համար)» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 1,1 մլն դրամ՝ 7 սարքեր ձեռքբերելու նպատակով:

Փաստացի ձեռք են բերվել 7 դիմադրության չափիչ սարքեր 1,9 մլն դրամ ընդհանուր արժեքով:

«Համակարգչային, կազմակերպչական տեխնիկայի և գույքի ձեռքբերում» ուղղությամբ 2014 թվականին նախատեսվում էր ներդնել 45,4 մլն դրամ՝ համակարգչային, կազմակերպչական տեխնիկայի և գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով:

Փաստացի ձեռք են բերվել 45,5 մլն դրամ ընդհանուր արժեքով հիմնական միջոցներ, որոնք հանձնվել են շահագործման:

«Համակարգչային և կազմակերպչական տեխնիկայի ձեռք բերում» ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 20,2 մլն դրամ:

Փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 24,2 մլն դրամի հիմնական միջոցներ:

Իրականացված ներդրումներում ներկայացված են 0,2 մլն դրամ արժեքով երկու թուղթ մանրացնող սարքեր, որոնք տվյալ ենթաուղղությամբ համաձայնեցված չեն:

«Գրասենյակային գույքի ձեռքբերում» ենթաուղղությամբ 2014 թվականին նախատեսվում էր ներդնել 25,2 մլն դրամ:

Հաշվետու տարում ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 21,3 մլն դրամի հիմնական միջոցներ:

Իրականացված ներդրումներում ներկայացված է 0,6 մլն դրամի խոհանոցային կահույք, որի ձեռքբերումը համաձայնեցված չէ ներդրումային ծրագրով:

«Ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերում, վերասարքավորում և հիմնանորոգում» ուղղությամբ 2014 թվականին նախատեսվում էր ներդնել 692,7 մլն դրամ մեքենա-մեխանիզմների ձեռքբերման և վերասարքավորման ուղղությամբ:

Փաստացի իրականացվել են 78,9 մլն դրամի ներդրումներ, որոնք ամբողջ ծավալով հանձնվել են շահագործման:

«Օպերատիվ ավտոմեքենաների ձեռքբերում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 283,5 մլն դրամ ծավալով ձեռք բերել 43 հատ միջին և փոքր դասի մեքենաների և 1 միկրոավտոբուս:

Թեթև մարդատար օպերատիվ ավտոմեքենաների ձեռքբերում (միջին դասի) ենթաուղղությամբ նախատեսվում էր 127,5 մլն դրամ ընդհանուր արժեքով ձեռբերել 17 մեքենաներ:

Հաշվետու տարում ձեռք է բերվել 1 հատ 2011 թվականի արտադրության Տոյոտա Քեմրի մակնիշի ավտոմեքենա, որը համաձայնեցված չէ ներդրումային ծրագրով:

Թեթև մարդատար օպերատիվ ավտոմեքենաների ձեռքբերում (փոքր դասի) ենթաուղղությամբ նախատեսվում էր 143,0 մլն դրամ ընդհանուր արժեքով ձեռքերել 26 մեքենաներ:

Հաշվետու տարում ձեռք են բերվել 2014 թվականի արտադրության 2 հատ Լադա 21214 մակնիշի մեքենաներ:

«Վթարային ավտոմեքենաների ձեռքբերում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 206,0 մլն դրամ ընդհանուր արժեքով ձեռք բերել 19 վթարային մեքենաներ:

Փաստացի ձեռք են բերվել 2 մեքենա 11,3 մլն դրամ ընդհանուր արժեքով:

Բարձր անցունակությամբ մինչև 1,5տ բեռնատարողությամբ մարդատար-բեռնատար գազի վթարային ավտոմեքենաների ձեռքբերում ենթաուղղությամբ համաձայնեցված էր 48,0 մլն դրամ՝ 8 մեքենա ձեռքբերելու նպատակով:

Հաշվետու տարում ձեռք են բերվել 2 հատ ՈՒԱԶ 3909 մակնիշի ավտոմեքենաներ՝ ընդհանուր 11,3 մլն դրամ արժեքով:

«Բեռնատար ավտոմեքենաների ձեռքբերում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 81,5 մլն դրամ ընդհանուր արժեքով ձեռք բերել 10 բեռնատար մեքենաներ:

Փաստացի ձեռք են բերվել 2 հատ ԳԱԶ 3302 և 1 հատ ԳԱԶ 2705 մակնիշի բեռնատար մեքենաներ 19,5 մլն դրամ ընդհանուր արժեքով:

«Ավտոմեքենաների վերասարքավորում՝ բնական գազով լիցքավորման համար» ենթաուղղությամբ նախատեսվում էր 18,7 մլն դրամ ծավալով իրականացնել 55 հատ ավտոմեքենաների վերասարքավորում:

Փաստացի 3,2 մլն դրամ ծավալով իրականացվել է 7 հատ մարդատար և բեռնա-մարդատար մեքենաների վերասարքավորում:

«Երևանի ԳԳՄ-ի համար մեխանիզմների, ավտոմեքենաների և սարքավորումների ձեռքբերում» ենթաուղղությամբ նախատեսում էր ներդնել 103,0 մլն դրամ: Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 24,1 մլն դրամի ներդրումներ:

«Անիվավոր էքսկավատոր-ամբարձիչի ձեռքբերում, շերեփի տարողությունը 0.25 -0.3մ3, ամբարձիչի տարողությունը 1-1.2մ^3 (լրացուցիչ սարքավորումների

կոմպլեկտով)» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 53,1 մլն դրամ մեկ մեքենայի ձեռքբերման նպատակով:

Փաստացի ձեռք է բերվել և շահագործման հանձնվել 1992թ. արտադրության SITEMASTERS JSB 3ex էքսկավատոր, որը համաձայնեցված չէ ներդրումային ծրագրով:

«Շենքերի և շինությունների վերականգնում, վերակառուցում և արդիականացում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 2014 թվականին 259,3 մլն դրամ ուղղել ընկերության վարչական շենքերում նորոգման և վերակառուցման աշխատանքներ իրականացնելուն:

Փաստացի իրականացվել են 207,9 մլն դրամի ներդրումներ, որից 150,8 մլն դրամը հանձնվել է շահագործման:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի վարչական մասնաշենքի վերակառուցում» ենթաուղղությամբ 2014 թվականին նախատեսվում էր ներդնել 41,1 մլն դրամ:

Փաստացի իրականացվել են 58,7 մլն դրամի աշխատանքներ, որից 25,3 մլն դրամը հանձնվել է շահագործման: Ավարտված ներդրումները վերաբերվում են ընկերության վարչական շենքի ճաշարանի նորոգման աշխատանքներին, ինչը չի մասնակցում ընկերության լիցենզավորված գործունեությանը և ենթակա է նվազեցման:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի N2 բազայի կապիտալ նորոգում և արդիականացում (վարչական շենքի և պահեստների կապիտալ նորոգում, գազիֆիկացում, ջեռուցում և տարածքի բարեկարգում)» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 35,0 մլն դրամ:

Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել №2 բազայի վարչական շենքի և պահեստների վերակառուցման աշխատանքներ՝ 37,4 մլն դրամ ծավալով:

«Երևանի ԳԳՄ-ի վարչական շենքի համար կաթսայատան և ջեռուցման համակարգի կառուցում» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 23,2 մլն դրամ:

Հաշվետու տարում իրականացվել են 24,0 մլն դրամի ներդրումներ, որից 23,5 մլն դրամը հանձնվել է շահագործման

«ԳԳՄ-ների շենքերի և շինությունների վերականգնում, վերակառուցում և արդիականցում» ենթաուղղությամբ համաձայնեցված էր 160,0 մլն դրամ:

Փաստացի իրականացվել են 87,8 մլն դրամի աշխատանքներ, որից 64,6 մլն դրամի աշխատանքները հանձնվել են շահագործման: Ավարտված աշխատանքների ցանկում ներկայացված են գազալցակայանի տարածքի ասֆալտապատման և

«Արմավիր Գազմաշ» ՍՊԸ արտադրական մասնաշենքի վերանորոգման աշխատանքներ՝ 29,4 մլն դրամ ընդհանուր արժեքով, որոնք չեն վերաբերում ընկերության լիցենզավորված գործունեությանը:

«Կորպորատիվ տեխնոլոգիական կապի ընդլայնում և արդիականացում» ենթաուղղությամբ 2014 թվականին նախատեսվում էր 31,3 մլն դրամ ուղղել ընկերության կորպորատիվ համակարգչային ցանցի արդիականացմանը և IP հեռախոսակապի տեղակայմանը:

Կորպորատիվ համակարգչային ցանցի զարգացման նպատակով 2014 թվականին համաձայնեցված էր 17,9 մլն դրամ: Հաշվետու տարում ձեռք են բերվել ներդրումային ծրագրով համաձայնեցված ընդհանուր արժեքով ցանցի մուտքի անցուղի և սերվեր՝ ընդհանուր 2,8 մլն դրամ արժեքով:

Նշված հիմնական միջոցները հավատարմագրային կառավարման են հանձված այլ ընկերության և չեն մասնակցում Ընկերության լիցենզավորված գործունեությանը:

IP հեռախոսակապի անցկացման նպատակով 2014 թվականին համաձայնեցված էր 13,4 մլն դրամ: Հաշվետու տարում ձեռք են բերվել 21 հատ ինտերնետային հեռախոսակապի անցուղիներ՝ 0,8 մլն դրամ ընդհանուր արժեքով, 13 հեռախոսային կայաններ՝ 3,0 մլն դրամ ընդհանուր արժեքով: Ներդրումների մնացած մասը վերաբերվում են համապատասխան արտոնագրերի փաթեթների ձեռքբերմանը և ԳԳՄ-նրի վարչական շենքերում IP հեռախոսակապի անցկացման աշխատանքներին՝ ընդհանուր 3,2 մլն դրամ:

Գազաբաշխման համակարգի շահագործման և սպասարկման ծառայությունների ոլորտներում ներդրումների ուղղության մնացած ենթաուղղություններով 2014 թվականին ներդրումներ չեն իրականացվել կամ իրականացված ներդրումները մնացել են անավարտ:

ԲԱԺԻՆ 4.
Իրականացված ներդրումների ազդեցությունը սպասարկման որակի ցուցանիշների վրա

Ընկերության ներդրումային գործունեության արդյունքները գնահատելու նպատակով իրականացվել է նաև սպառողների սպասարկման որակի ցուցանիշների համեմատական վերլուծություն 2013 և 2014 թվականների համար: Մասնավորապես ուսումնասիրվել են ընդհատումների միջին տևողության (SAIDI) և ընդհատումների միջին հաճախականության (քանակի) (SAIFI) ցուցանիշները: Նշված ցուցանիշներն բնութագրում են մեկ բաժանորդին բաժին ընկնող անջատումների տևողությունն ու քանակը և հիմնականում օգտագործվում են որպես հուսալիության ինդիկատորներ: Վերլուծության ընթացքում դիտարկվել են միայն այն դեպքերը, երբ ընդհատման պատճառ են հանդիսացել գազամատակարարման ցանցում առաջացած վթարները և փոխադրող ընկերությունը: Կատարված ուսումնասիրության արդյունքներով 2014 թվականի ընթացքում ընդհատումների միջին տևողության ցուցանիշը աճել է միջինում 2,84 անգամ՝ կազմելով 389,98 րոպե/բաժանորդ, իսկ ընդհատումների միջին հաճախականությունը (քանակը)՝ միջինում 1,77 անգամ՝ կազմելով 0,48 ընդհատում/բաժանորդ:

2013 թվականի համեմատությամբ 2014 թվականին ցուցանիշներն առավելապես աճել են Արագածոտնի մարզում, իսկ Վայոց Ձորի, Տավուշի մարզերում բարելավվել են ինչպես ընդհատումների միջին տևողության, այնպես էլ հաճախականության ցուցանիշները:

Հարկ է նշել, որ համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» №95Ն որոշման, Ընկերությունը պարտավոր է նվազագույնի հասցնել յուրաքանչյուր բաժանորդի գազամատակարարման ընդհատումների թիվը և ընդհատման տևողությունը, ընդ որում, ընդհատումների թիվը 12 ամսվա ընթացքում չպետք է գերազանցի 4 անգամը, իսկ յուրաքանչյուր ընդհատման առավելագույն տևողությունը՝ 36 ժամը:

ԲԱԺԻՆ 5.
Իրականացված գնումների մոնիթորինգի արդյունքները

Ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացված գնումների արդյունավետությունը գնահատելու նպատակով իրականացվել է ընկերության կողմից ձեռքբերված ապրանքների, ինչպես նաև կապալառու ընկերությունների կողմից իրակացվող աշխատանքների ընթացքում պատվիրատուի կողմից տրամադրվող նյութերի գնային վերլուծություն: Ընկերության կողմից ձեռք բերված ապրանքների շուկայական գների մոնիթորինգը ցույց է տալիս, որ որոշ սարքավորումների ձեռք բերման գները միջինում 12%-ով գերազանցում են շուկայական միջին գները կամ ներդրումային ծրագրով համաձայնեցված միավորի միջին գինը:

Կապալառու կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքների ընտրանքային ուսումնասիրության և դրանց շուկայական գների հետ համադրության արդյունքում 138 ակտերից 50-ում գները միջինում 17%-ով գերազանցում են շուկայական գները: Մնացած ակտերում էական գերազանցումներ չկան:

ԲԱԺԻՆ 6.
Հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

6.1. Փաստացի կատարված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը

2014 թվականի ընթացքում ընկերության կողմից փաստացի ավարտված 4 610,2 մլն դրամի ներդրումների ծավալում առկա են ներդրումներ, որոնք ենթակա են նվազեցման ընկերության սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից, մասնավորապես.

1. 338,6 մլն դրամի ներդրումներ նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից՝ ներդրումային ծրագրով նախապես համաձայնեցված չլինելու կամ ընկերության լիցենզավորված գործունեությանը չմասնակցելու պատճառով:

2. 206,9 մլն դրամ նվազեցվել է սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում:
3. Ընկերության կողմից իրականացված գնումների վերլուծության արդյունքում 25,7 մլն դրամ նվազեցվել է տեղակայման ենթակա սարքերի, սարքավորումների և նյութերի գներից:
4. Հաշվի առնելով, որ ընկերության կողմից բնական գազի մատակարարման սակագնի 2014 թվականի մեծության հաշվարկման ժամանակ սակագնի ծախսային հոդվածներում ներառվել է ընկերության աշխատողների փաստացի թվաքանակով հաշվարկված միջին աշխատավարձը, ապա ավարտված աշխատանքների մասով հաշվետվությամբ ներկայացված 221,7 մլն դրամ ծավալով կապիտալացված աշխատավարձից ընդունվել են միայն ուղղակի գործարքային եղանակով վարձատրվող աշխատակիցներին ուղղված 169,5 մլն դրամի աշխատավարձերը, իսկ 52,4 մլն դրամը նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:
5. Հաշվի առնելով, որ օտարված (վաճառված) և լուծարված հիմնական միջոցներն այլևս չեն մասնակցում ընկերության լիցենզավորված գործունեությանը, հիմնական միջոցի օտարման (վաճառքի) արժեքը՝ 29,9 մլն դրամ, իսկ լուծարված հիմնական միջոցների դեպքում լուծարման արդյունքում մուտքագրված նյութերի արժեքը՝ 23,9 մլն դրամ, նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:
6. Իրականացվել է նաև հանձնաժողովի հետ համաձայնեցված և փաստացի իրականացված ներդրումների ծավալի համադրում: Համադրման ընթացքում նախապես համաձայնեցված ներդրումների ծավալը համեմատվել է փաստացի իրականացված ներդրումների ծավալի հետ՝ վերը նշված նվազեցումների իրականացումից հետո: Արդյունքում, հանձնաժողովի հետ նախապես համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցվել է 233,5 մլն դրամով, որը և նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից՝ հետևյալ ենթաուղղություններով.
   - գազի կենցաղային հաշվիչների և պաշտպանիչ արկղերի ձեռքբերում և տեղադրում՝ 205,2 մլն դրամ,

- էլեկտրոնային ճշտիչներով համալրված մեմբրանային գազահաշվիչների ձեռքբերում և տեղադրում՝ 16,5 մլն դրամ,
- չափիչ և հատուկ նշանակության սարքերի և գործիքների ձեռքբերում՝ 5,2 մլն դրամ,
- համակարգչային և կազմակերպչական տեխնիկայի ձեռքբերում՝ 3,8 մլն դրամ,
- ավտոմեքենաների վերասարքավորում՝ բնական գազով լիցքավորման համար՝ 0,1 մլն դրամ,
- շենքերի և շինությունների վերականգնում, վերակառուցում և արդիականացում՝ 2,6 մլն դրամ:

Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող ներդրումներից սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից նվազեցվել է 26,0 մլն դրամ: Մնացած ներդրումները ենթակա են ներառման սակագնային մարժայով փոխհատուցվող ներդրումների ծավալում: Մասնավորապես գազի կենցաղային հաշվիչների և պաշտպանիչ արկղերի ձեռքբերում և տեղադրման ուղղությամբ ներդրումների ծավալները պայմանավորված են ստացված դիմումների քանակով, որոնք հնարավոր չէր ճշգրիտ կանխատեսել, ինչ վերաբերում է ավտոմեքենաների բնական գազով լիցքավորման համար վերասարքավորման և շենքերի և շինությունների վերականգնման աշխատանքների շրջանակում իրականացված Ընկերության №2 բազայի կապիտալ նորոգման և արդիականացման ուղղությամբ 2,3 մլն դրամի ներդրումներին, կատարողական ակտերի ուսումնասիրության արդյունքում էական շեղումներ չեն հայտնաբերվել:

6.2. Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Հաշվի առնելով վերլուծության արդյունքները՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 2014 թվականին փաստացի իրականացված և հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը ամփոփված է աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9
մլն դրամ

1	**Իրականացված ներդրումներ**	**5 845.96**
2	**Անավարտ աշխատանքներ**	**1 235.74**
3	**2014 թվականի ընթացքում ավարտված ներդրումների ծավալը**	**4 610.22**
4	**Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից նվազեցված ներդրումներ, այդ թվում՝**	**703.38**
4.1	Հանձնաժողովի հետ չհամաձայնեցված ներդրումներ	338.62
4.2	Ապրանքների և ծառայությունների շուկայական գների մոնիթորինգի արդյունքում իրականացված նվազեցումներ	232.61
4.2.1	Կապալառու ընկերությունների կողմից իրականացված աշխատանքներից	206.89
4.2.2	Գնումների վերլուծության արդյունքում նվազեցված ներդրումներ	25.73
4.3	Սակագնով փոխհատուցված աշխատանքի վճարման գծով ծախսումներ	52.37
4.4	Օտարված (վաճառված) և լուծարված հիմնական միջոցներ	53.81
4.5	Համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող ներդրումներ	25.96
5	**2014 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումներ**	**3 906.84**

Եզրակացություններ

1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2014 թվականի ներդրումային ծրագիրը կատարվել է 49%-ով: Ներդրումները հիմնականում ուղղվել են Գազաբաշխման համակարգին:

2. Գազամատակարարման ցանցին են միացել 10 893 նոր բաժանորդներ և 14 478 բաժանորդների մոտ տեղադրվել են ազդանշանային սարքեր և ինքնաշխատ վթարային կափույրներ: Արդյունքում գազամատակարարման ցանցին միացված բաժանորդների ընդհանուր քանակը կազմել է 661 386:

3. Ընկերության պատվերով կապալառու կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքների (հումք-նյութերի, սարքավորումների և աշխատանքների) գների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշ դեպքերում դրանք գերազանցում են համանման աշխատանքների շուկայական արժեքները:

4. Շահագործման հանձնված հիմնական միջոցներից ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացվել են 4 610,2 մլն դրամի ներդրումներ, որոնցից 703,4 մլն դրամի ներդրումները, ընդհանուրի 15%-ը, համարվել են ոչ արդյունավետ կամ դեռևս լիցենզավորված գործունեությանը չմասնակցող և չեն ներառվել փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում:

5. 2013 թվականի համեմատությամբ 2014 թվականին ընդհատումների միջին տևողության ցուցանիշը աճել է միջինում 2,84 անգամ՝ կազմելով 389,98 րոպե/բաժանորդ, իսկ ընդհատումների միջին հաճախականությունը (քանակը)՝ միջինում 1,77 անգամ՝ կազմելով 0,48 ընդհատում/բաժանորդ: Ցուցանիշներն առավելապես աճել են Արագածոտնի մարզում, իսկ Վայոց Ձորի, Տավուշի մարզերում բարելավվել են ինչպես ընդհատումների միջին տևողության, այնպես էլ հաճախականության ցուցանիշները:

Հղումներ օգտագործված նյութերին

Որոշում 1 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 8-ի №452Լ որոշումը «ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին».

Որոշում 2 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի №444Ա որոշումը «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության 2014-2016 թվականների ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին».

Եզրակացություն- 2014 թվականի նոյեմբերի 18-ի №ՌՆ-2595Լ գրությամբ ներկայացված եզրակացություն՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի նույն թվականի հոկտեմբերի 10-ի №01-21/4183 գրությամբ առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ.

Հաշվետվություն - «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 2014 թվականին իրականացված փաստացի ներդրումների վերաբերյալ ընկերության 2015 թվականի մայիսի 11-ի №01-24/2037 գրությամբ ներկայացված հաշվետվությունը.

Տեղեկատվություն 1 - «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի սպառողների սպասարկման որակի ցուցանիշները 2013, 2014 թվականներին http://psrc.am/am/sectors/gas/service-quality-indicators

2013, 2014 թվականների ընթացքում գազամատակարարման համակարգում սպառողների գազամատակարարման ընդհատումների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն

Տեղեկատվություն 2 - «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 2014 թվականի ընթացքում գազամատակարարման համակարգին միացված բաժանորդների քանակը
http://armenia-am.gazprom.com/press/news/2015/01/1029/